

ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ

ԳՈՐԾՆԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԻՒՆ

(Հոս Ա. Պարսի)

ՍԿՋԲՆԱԿԱՆ ՈՒՍՈՒՅՈՒՄՆ.

Քիչ առաջ արգէն ասացինք, որ գործելու ձգտումը բնածին է մանուկի մէջ: Եւ թէպէտ այժմ բոլոր մանկավարժներն էլ խոստովանում են այդ ձգտումը հրահրելու անհրաժեշտութիւնը, բայց նրանից բղխող դաստիարակչական հետեանքների խնդրում նրանց այդ ներդաշնակ համերաշխութիւնը փոխւում է մի ցաւալի անհամաձայնութեան: Մանաւանդ, երբ խօսք է լինում, թէ հարկաւոր է դպրոցի գոնէ ստորին դասարանների համար այդ ուղղութեամբ մշակել դասաւանդութեան նոր ձևեր, նրանցից շատերն իսկոյն անվերապահ յայտնում են, թէ աշակերտի գործելու ձգտումը զարգացնելը դպրոցի պարտականութիւնը չէ, այլ ընտանիքի, որտեղ երեխաները թէ մեծ հնարաւորութիւն և թէ ահագին ժամանակ ունեն իրենց այդ բնատուր ձգտումն արտայայտելու:

Իեռ չենք ասում, որ ներկայ ընտանիքը—իր ճնշող մեծամասնութեամբ—անընդունակ է իրեն հրամցրած պատուից օգտուելու: Տգիտութիւնը և կեանքի սօցիալ տնտեսական պայմանները արգելում են նրան:

Սակայն մի բոպէ ենթադրենք, որ ժամանակակից ընտանիքը թէ տնտեսապէս և թէ մտաւորապէս այնքան բարձր է, որ ընդունակ է անբասիր կերպով իր մանուկ անդամներին դաստիարակելու: Բայց արդե՞օք պիտի կարողանայ կատարել իր այդ պարտականութիւնը: Արդե՞օք վերոյիշեալ գործօններից զատ չկան այլ պայմաններ, որ այդ բանում անյաղթելի խոչընդոտ լինէին ընտանիքի մեծ, դաստիարակ անդամների համար:

Պարզ է, որ այս հարցի պատասխանը բացասական լինել չի կարող:

Դրանց թւում առաջնակարգ տեղ է բռնում այն անհիմն լատեսութիւնը, որ մանուկների ամբողջ դաստիարակութիւնը—մասնաւորապէս գործելու բնատուր ձգտումը նրանց մէջ զարգա-

ցնելու հոգացողութիւնը— ընտանիքին թողնելու կողմնակիցներն ունեն հրեխաների ազատ ժամանակի և յարմարութիւնների մասին ընտանիքում: Նրանք մոռանում են, որ ներկայ կեանքը— նոյն իսկ ամենամերձաւոր անցեալի համեմատութեամբ— անճանաչելիութեան չափ վիտրուել, յիղաշրջուել է:

Թերևս հնում կարելի էր դաստիարակչական գործի պատասխանատուութիւնը ընտանիքին վստահել, որովհետև ընտանիքն իսկապէս աւելի շատ ժամանակ ունէր դրանով զբաղուելու, իսկ միւս կողմից՝ հրեխաներն էլ շարունակ իրենց ծնողների մօտ էին:

Ներկայումս այդպէս չէ, իհարկէ, մանաւանդ աշխատաւոր դասակարգին պատկանող ընտանիքներում: Ծնողներն այնտեղ ժամանակ չունեն— այդ խօսքի բուն իմաստով— իրենց զաւակների դաստիարակութեամբ զբաղուելու: Երեխաները նոյնպէս, որովհետև կեանքի ալիքը նրանց ևս ընտանեկան յարկի տակից խլելով, տարել դպրոց, գործարան և կամ մի այլ գործալայր է ձգել: Այնպէս որ, երեխաների ընտանիքում ունեցած ազատ ժամանակի և յարմարութիւնների մասին եղած լաւատեսութիւնը չի համապատասխանում իրականութեան:

Մի կողմ թողնելով հացի խնդրով դէպի զանազան գործավայրերը նետուած մանուկներին— որոնց ընտանիքում ունեցած ազատ ժամանակի և դաստիարակչական յարմարութիւնների նկատմամբ խօսք անգամ լինել չի կարող— դպրոց յաճախող մանուկների մասին ևս պէտք է ասենք, որ նրանք էլ չունեն այն յարմարութիւններն ու ազատ ժամանակը, որ սովորաբար ենթադրւում է: Դպրոց գնալ—գալու համար կորցրած ժամանակը, աւանդուող առարկաների քանակը և տանը սովորելու համար տրուած դասերն ու զբաւոր աշխատանքները այնքան ժամանակ են խլում նրանցից— այո՛, նոյն իսկ ամենաստորին դասարանների աշակերտներից— որ նրանք խաղալ էլ չեն կարողանում:

Ճիշտ է, թէև շատ մանկավարժներ խոստովանում են դպրոցական սուսջին տարիների դասաւանդութեան ըողոր թերութիւններն ու սխալները, բայց և միևնոյն ժամանակ առարկում են, թէ անկարելի է վերացնել այդ ամենը, քանի որ ներկայ դպրոցներն ահագին են, դասարանները՝ ըզզմամարդ:

Անշուշտ, նրանց առարկութիւնը որոշ կշիռ ունի, սակայն ոչ անժխտելի: Ամենայն հեշտութեամբ կարելի է կրճատել թէ՛ դասարանների ըզզմամարդութիւնը¹⁾ և թէ՛ շարաթական դասերի

1) Այս պայմանը Առաջատանում— մասնաւորապէս հայ իրականութեան մէջ— ներկայումս կիրառել անհնարին է, քանի որ դպրոցների թիւը չափազանց խղճուկ է մեղանում:

թիւը—մանաւանդ ստորին բաժանմունքներում: Դրանից դպրոցը
 ոչ թէ կփնասուի, այլ ընդհակառակը, կշահուի:

Մեր ասածի ճշմարտութիւնն ապացուցանելու համար բաւա-
 կան է յիշել միայն երկու փաստ.—ա. վերոգրեալ բարեփոխութիւն-
 ները դպրոցական կեանքում իրականանալու դէպքում, աշակերտ-
 ների առողջութիւնը կդրուի անհամեմատ աւելի նպաստաւոր պայ-
 մաններում, քան ներկայումս է: Իսկ այդ հանգամանքը միևնոյն
 ժամանակ նաև չափազանց կարևոր է և՛ նրանց հոգեկան զար-
 դացման տեսակէտից, որովհետև առողջ հոգին առողջ մարմնի մէջ
 միայն կարող է ապրել: Ը. Բարեփոխուած դպրոցում ուսուցումը
 դառնալով ինտենսիւ, աւելի մեծ չափով կնպաստի աշակերտու-
 թեան մտաւոր զարգացմանը, քան ներկայ պայմաններում տեղի
 ունի այդ:

Այժմ հարց է ծագում, եթէ այդ այդպէս է, հապա ինչո՞ւ
 դպրոցական նոր ծրագրի անհրաժեշտութեան խնդիրը չի կարո-
 դանում լայն ժողովրդականութիւն գտնել, ինչո՞ւ հին ծրագիրը
 դեռ ևս այնքան կողմնակիցներ և նուիրուած պաշտպաններ ունի:
 Հարցի պատասխանը պարզ է և հասկանալի, որովհետև ներկայ
 դպրոցը, իր բազմամեայ գոյութեամբը, կարողացել է մարդկանց
 մէջ ստեղծել շատ զօրեղ նախապաշարմունքներ յօգուտ իր և ի
 փնասա ամեն մի քիչ-շատ աչքի ընկնող նորամուծութեան: Բայց
 եթէ կարողանանք, գէթ մի բոլոր, ազատուել մեզ կաշկանդող
 աւանդութիւններից և կանխակալ կարծիքներից, այն ժամանակ
 իսկոյն կհամոզուենք, որ անհրաժեշտ է հիմնովին բարեփոխել գոնէ
 սկզբնական ուսուցման հնացած շէնքը, բարեփոխել, հիմք ըն-
 դունելով Ֆրեոբէլի առողջ գաղափարները:

Նշանակալից է այն երևոյթը, որ մինչ դեռ այսօր Արևմուտքի
 բոլոր քաղաքակիրթ երկրներում—ինչպէս նաև Ամերիկայում—
 Ֆրեոբէլի մանկավարժական վարդապետութիւնը նուաճումներ է
 անում, Գերմանական ժողովրդական դպրոցը, մի առանձին յա-
 մառութեամբ, դիմադրում է Մեծ Մանկավարժի քարոզներին և
 նրանց հետևել երբէք չի ցանկանում: Օրինակի համար վերցնենք,
 ամենից առաջ, Ֆրանսիան:

Մայրական դպրոցներ.

(Ecoles maternelles).

Մայրական դպրոցը Ֆրանսիայում—ինչպէս ասում է երկրի
 դպրոցական օրէնսդրութիւնը—ժողովրդական դպրոցական կազմի
 իրաւահաւասար մի անդամն է: Նա անցումն է ընտանիքից դէպի
 իսկական դպրոցը:

Մայրական դպրոցները գլխաւոր նպատակն է ոչ այնքան

ուսուցումը, երեխաներին գիտելիքներ հաղորդելը, որքան նրանց դաստիարակելը: Այնտեղ երեխաների հետ վարուում, նրանց դաստիարակում են այնպէս, ինչպէս կարող է մի կրթուած մայր դաստիարակել իր հարազատ զաւակներին: Այստեղից էլ դպրոցն իր անունն է ստացել—մայրական դպրոց:

Սրանից, ի հարկէ, չի հետևում, որ Փրանսիայի այդ դպրոցներում ուսուցումը և գիտութիւնների ծանօթութիւնը բոլորովին մերժուած են: Որովհետև դաստիարակութեան հետ սերտ կիրպով կապուած է դաստիարակողի մտքի մարզումը, դրա համար էլ Մայրական դպրոցներում յատուկ ուշադրութիւն են դարձնում այն միջոցների վրայ, որոնք նպաստում են մտքի զարգացմանը: Դրանց շարքում պատուաւոր տեղ են բռնում թեթև ձեռարուեստները, շարժումն պահանջող ֆիզիքական վարժութիւնները և մանկական զանազան խաղերը, ընթացակցուած հրգեցողութեամբ: Այնուհետև գալիս են միւս առարկաները՝ նկարչութիւնը, ընթերցանութիւնը, գրութիւնը և համրանքը—ի հարկէ, իրենց տարրական հիմունքներով միայն: Այս բոլորից զատ, մեծ կարևորութիւն է տրւում նաև խօսելու ու պատմելու արուեստին, ուստի և դպրոցական ժամանակի գլխաւոր բաժինը յատկացրուած է երեխաների գրուցատրական վարժութիւններին: Միևնոյն ժամանակ որոշ հասկացողութիւն է տրւում երեխաներին շրջապատող կեանքի հիմնական պայմանների և բարոյագիտութեան առաջին օրէնքների մասին:

Թէև օրէնքով քաղաքային համայնքները Փրանսիայում պարտաւոր չեն Մայրական դպրոցներ պահելու, բայց իրապէս համարեա բոլոր քաղաքներն էլ ունեն այդպիսիք և իրենք են հոգում նրանց ծախքերի ամենախոշոր բաժինը, չնչին մնացորդի լրացումը միայն պետական զանձարանին թողնելով: Ինքն ըստ ինքեան հասկանալի է, որ խոշոր արդիւնաբերական կենտրոններում Մայրական դպրոցները, կրթական հիմնարկութիւն լինելու հետ միասին, ներկայանում են նաև իբրև մի ապաստարան իրենց մէջ պատսպարուած 2—3 ամեայ մանուկների համար:

Իրենց կեանքովն ու գործունէութեամբը Մայրական դպրոցները յիշեցնում են միւս երկրների Մանկապարտէզները, միայն այն տարբերութեամբ, որ այնտեղ երեխաները համեմատաբար աւելի ազատ են՝ ինչպէս իրենց սեպհակտն տանը: Զբաղմունքներն էլ նոյն են, բայց միայն շատ աւելի զարգացած ու ծաղկած:

Չնայած իր մի քանի թերութիւններին, Փրանսիական Մայրական դպրոցը մի շատ օգտակար հիմնարկութիւն է ժողովրդի դաստիարակութեան համար և այդ տեսակէտից աւելի բարձր է, քան այլ երկրների Մանկապարտէզները կամ Ռուսաստանի Մսուր-

ները (Ясли): Այդ է պատճառը, որ Ֆրանսիայում Մայրական դպրոցների թիւը աճում է օրեօր¹⁾։

Որտեղ Մայրական դպրոցներ չկան, այնտեղ նրանց փոխարինում են—այսպէս կոչուած—Մանկական դասարանները (classes enfantines)։ Սրանք ևս ժողովրդական դպրոցական կազմի ամբողջութեան մի կարևոր աստիճանն են կազմում և Մայրական դպրոցներից տարբերում են նրանով, որ երեխաներին ընդունում են 5 տարեկանից սկսած։

Մեծ քաղաքներում—մասնաւորապէս Փարիզում—Մանկական դասարանները հանդիսանում են Մայրական դպրոցների անհրաժեշտ շարունակութիւնը և ծառայում են որպէս օգակ՝ վերջինները բուն ժողովրդական դպրոցի հետ կապելու։ Մինչև 7 տարեկան հասակը այդ «դասարանում» մնալուց յետոյ, այնուհետև երեխայքը անցնում են իսկական ժողովրդական դպրոցը։

Անգլիական ժողովրդական դպրոցի կազմակերպութիւնը.

(Infant de partement)

Անգլիական ժողովրդական դպրոցն ևս ունի Ֆրանսիական Մանկական դասարանների նման մի հիմնարկութիւն, որը կազմում է մի անցողական աստիճան դէպի բուն ժողովրդական դպրոցը։ Ժողովրդական դպրոցի ստորին և հիմնական աստիճանը այստեղ ևս Մանկապարտէզն է։ Վերջինս Գերմանիայից Անգլիան անցնելով և պահելով նոյն իսկ իր գերմանական անունը, այնտեղ աւելի մեծ գեր է խաղում, քան իր բուն հայրենիքում, թէև ի հարկէ ոչ այնպիսի, ինչպիսին նա խաղում է Ամերիկայում։

Մանկական պարտէզը Ամերիկայում.

Միացեալ Նահանգները իրաւամբ կարելի է անուանել Մանկապարտէզների երկիր, որովհետև Մանկապարտէզները ոչ մի երկրում այնքան ժողովրդականութիւն չեն վայելում և այնքան շատ չեն, որքան Հիւսիսային Ամերիկայում։ Նրանք այնտեղ կազմում են դպրոցական համակարգութեան ամենաէական մասը. ամեն մի ժողովրդական դպրոց—գոնէ մեծ քաղաքներում—ունի իր մանկապարտէզը²⁾։ Իւրաքանչիւր սեմինարիա, իւրաքանչիւր

1) 1900 թուին միմիայն Փարիզ քաղաքը ունէր 159 Մայրական դպրոցներ, որոնց պահպանութեան համար քաղաքային միջոցներից ծախսում էր 5 միլ. ֆրանկ, չր հաշուելով դրա մէջ այդ նպատակով եղած մասնաւոր նուիրարեութիւնները։

2) Օրինակ, միայն Չիկագոյում դոյութիւն ունեն 120 ից աւելի օրինակելի մանկապարտէզեր, որոնց պահպանութեան ծախսերը հոգում է քաղաքը։

մանկավարժական դպրոց—նոյնպէս: Նրանք էլ ունին իրենց մանկապարտէզները՝ ուսանողների վարժութեան և գործնական պարամունքների համար: Քաղաքային կոչուած մանկապարտէզներից զատ կան նաև բազմաթիւ մասնաւորները:

Շատ բնորոշ է Ամերիկական մանկապարտէզների դասաւանդութեան ոգին, որը միևնոյն ժամանակ իրենով բնորոշում է նոյն երկրի դպրոցական ամբողջ ուսուցման ոգին ևս:

Ամերիկեան դասաւանդութեան ոգու ամենից աչքի ընկնող բնութագրերն են.—1. Դաստիարակի յատուկ ուշադրութեան առարկան է կազմում մանուկի հոգեկան բովանդակութիւնը: Ինչպէս յայտնի է, իւրաքանչիւր մանուկ մանկապարտէզ կամ դպրոց մտնելով, իր հետ բերում է սեպհական փորձերի, սեպհական մտապատկերների մի հարուստ պաշար: Դաստիարակ-ուսուցչի պարտաւորութիւնն է ոչ թէ արհամարհել մանուկի այդ սեպհական հարստութիւնը, այլ ընդհակառակը, օգտագործել այն, նրա վրայ հիմնելով իր կրթական-դաստիարակչական ամբողջ գործունէութիւնը: Այդ կողմից Ամերիկացի ուսուցիչները—մասնաւորապէս նրանց մանկապարտէզների ուսուցիչները—օրինակելի են:

2. Ամեն կերպ աշխատում են ուսումը և ուսուցումը հետաքրքրական դարձնել մանուկի համար, որովհետև առանց այդ հետաքրքրութեան կրթելու և դաստիարակելու կոչուած հիմնարկութիւնը անզօր է իր առաքելութիւնը կատարելու: Այդ նպատակին հասնելու համար Ամերիկական մանկապարտէզներում գործադրում են մանկավարժական այնպիսի միջոցներ, որոնք մի կողմից համապատասխան լինէին մանուկի զարգացման աստիճանին, իսկ միւս կողմից դրդէին նրան իր սեպհական ոյժերը զարգացնելու:

Այդ միջոցների մէջ գլխաւոր տեղը բռնում են մանկական խաղերը, նամանաւանդ այնպիսի խաղերը, որոնց մէջ խաղացող մանուկները ցուցադրում են հասակաւորների կեանքից զանազան միջնագէպեր: Այստեղ էլ խաղերը—ինչպէս և Ֆրանսիական Մայրական դպրոցներում—տեղի են ունենում երաժշտութեան, երգի և պատմութեան ընթացակցութեամբ: Խաղերից յետոյ գալիս են հետևեալ ձեռարուեստները—նկարչութիւնը, զանազան իրեր գունազարդելը (раскрашивание), այս կամ այն նիւթից փորագրելով իրեր պատրաստելը (вырезывание), կարը, հիւսելը, զանազան շէնքեր կառուցանելը, սոսնձելով կամ այլ միջոցով իրար կպցնելով իրեր պատրաստելը (склеивание) և այլն¹⁾:

1) Դժբախտաբար, մեր մանկավարժական լեզուն—որքան մեզ յայտնի է—զեռ ևս չունի փակաղծերի մէջ առնուած Ռուսական տերմինների համար յաջող արտայայտութիւններ:

Շնորհիւ թուածս հետաքրքրական դրազմունքների, մանկապարտէզը դառնում է սիրելի ամերիկացի մանուկի համար և կազմում է նրա կեանքի կենտրոնը: Այնտեղ գիտութիւնը և դաստիարակութիւնը իրար չեն ժխտում. նրանք զնում են համերաշխ և ձեռք-ձեռքի տուած: Մանուկը սովորում է սիրով և աշխոյժ. նա գիտութիւնը ձեռք է բերում ոչ թէ մեր աշակերտների նման յօրանջիլով ու ձանձրանալով, այլ զուարթ ու հաճոյքով, իր սեպհական փորձերով: Դրանով նա միաժամանակ դաստիարակում է և իր բնաւորութիւնը, որովհետև իր բազմաթիւ փորձերը դաստիարակում են նրա կամքը, իսկ կամքի դաստիարակութիւնը էպպէս բնաւորութեան դաստիարակութիւն է:

Ահա թէ ինչու մանկապարտէզում անցկացրած տարիները այնքան քաղցր են ամերիկացիների համար: Նրանք մնում են ամերիկացու յիշողութեան մէջ միշտ անջնջելի և կազմում են նրա մանկական կեանքի բանաստեղծական և ամենալուսաւոր էջը:

Նա միայն կարող է հասկանալ այս խօսքերը, ով բարեբախտութիւն է ունեցել վայելելու Ամերիկական մանկապարտէզի սքանչելիութիւնը, մանկապարտէզի, որ համարեան ամենուրեք զարդարուած է լինում Ֆրիդ. Պրեօրէլի արտայայտիչ պատկերով:

Թ. Տ. Յակոբեան

(Նարունակելի)

